Ալպերթոս տուկն Օստրիոյ ընտրի 'ի կայսերութիւն յամի Տեառն ՌՄՂԸ. թագաւորեալ ամս Ժ: Սա էր որդի Ադօլֆօսին նախ գրեցելոյ, և ընկալաւ օրհնութիւն 'ի պապէն: Յաւուրս սորա Թաթարք և Հայք գնացին 'ի վերայ Սուլթանին Մսրայ Նաւրոզ, և առին զԵրուսաղէմ՝ զՄսըր՝ զԴամասկոս, և զԵրուսաղէմ՝ ամենայն իշխանութեամբ աշխարհին և եկեղեցեօք. և Խանն շնորհեաց թագաւորին Հայոց Հեթմոյ՝ զամենայն փախուցեալ Քրիստոնեայսն, զոր ժողովեաց յԵրուսաղէմ. և մեծահանդէս տօն կատարելով եկաց անդ զաւուրս ԺԵ. և դարձաւ 'ի Դամասկոս: Ընդ այս ժամանակս 'ի թուին Հայոց ՉԾԶ. սպանաւ թագաւորս Հեթում և որդին Լևոնի եղբօր նորա 'ի Թաթար Պուլղըղոյ 'ի Սիս Կիլիկիոյ:

Հռիգուս եօթներորդ եղև ընտրեալ 'ի կայսերութիւն յամի Տեառն ՌՅԸ. նախ՝ յԱլամանիայ և յԻտալիայ ամս Դ.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան